



## ԳՐԻԳՈՐ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և միջազգային  
տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի ղեկան,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

## ԱՆՆԱ ՓԱԽԱՅԱՆ

ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի գլխավոր  
մասնագետ, ՍՏՀ ամբիոնի ասիստենտ,  
տնտեսագիտության թեկնածու

# ԼՈԳԻՍՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՈՐՍԻՆԳ. ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Համընդիանուր մրցակցության սրումը, աշխարհաքաղաքական մարտահրավերները, տրանսպորտային և լոգիստիկ ենթակառացվածքների անհավասարաչափ բաշխումը լուրջ մարտահրավերներ են ստեղծում համաշխարհային տնտեսության համար՝ մատոնամշելով արդյունավետ տրանսպորտային և լոգիստիկ համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը։ Լոգիստիկ գործընթացների արդյունավետությունը նպաստում է արևորի ընդլայնմանը, արտահանման բազմազանեցմանը, հետևապես տնտեսական աճի ապահովմանը։

Ներկայիս համաշխարհային զարգացումները հանգեցրել են լոգիստիկ գործընթացներում առևտուրիմզի կիրառման ծավալների աճին։ Ընդ որում, առևտուրիմզային ծառայությունների զարգացմանը գուգընթաց ընդլայնվում են երրորդ կողմին պատվիրակվող գործառույթները՝ ընդգրկելով համալիր տրանսպորտային լոգիստիկայի գործընթացների իրականացումից, մատակարարումների շղթայի նախագծման և պլանավորման աշխատանքներից մինչև պատվիրատու ընկերությունում լոգիստիկ բնույթի գործարար գործընթացների համալիր կառավարումը։ Միևնույն ժամանակ, մատակարարման շուկաների և ծավալների ընդլայնմամբ որոշ մասնագիտացված ծառայություններ հնարավոր չեն տնտեսապես նպատակահարմար չեն իրականացնել ապրանքատիրոջ կամ բեռնատիրոջ սեփական ուժերով, ուստի նման ծառայությունները վերածվում են մասնագիտացված առևտուրիմզային ընկերությունների հիմնական գործառույթների։

**Հիմնաբառեր.** լոգիստիկ ծառայություններ, լոգիստիկ արդյունավետության համարիվ, առևտուրսինգ, լոգիստիկ միջնորդ, երրորդ կողմի լոգիստիկա, համաշխարհային եկամուտներ, լոգիստիկ ենթակառուցքաժբաններ

JEL: F4, F60

Աշխարհաքաղական մարտահրավերները, համընդգրկուն մրցակցության սրումը, տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցքաժբանների անհավասարաչափ բաշխումն ըստ տարածաշրջանների և տրանսպորտի տեսակների լուրջ մարտահրավերներ են ստեղծում համաշխարհային տնտեսության համար: Բեռնափոխադրումների և տարանցման հետ կապված ծախսերը խոշընդոտում են միջազգային առևտորում երկրների առավել ընդգրկուն մասնակցությանը՝ մատնանշելով արդյունավետ տրանսպորտային և լոգիստիկ համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, տրանսպորտային մեծ ծախսերը խաթարում են զարգացող երկրների մրցունակությունը համաշխարհային շուկայում, ինչպես նաև այդ երկրների՝ առավել ցածր ինքնարժեքով ապրանքներ արտադրելու հնարավորությունները: Այսպիսով՝ հույժ կարևորվում է արդյունավետ լոգիստիկ լուծումների շնորհիվ արտադրության ծախսերի կրճատումը: Արդյունքում տարեցտարի ավելանում են լոգիստիկ ծառայությունների առևտորսինգի համաշխարհային ծավալները:

Միջազգային առևտորում լոգիստիկ ծախսերը կազմում են ընդիհանուր ծախսերի 21.38%-ը<sup>1</sup>, ընդ որում, այդ ցուցանիշն էապես տարբերվում է ըստ տնտեսության առանձին ոլորտների: Լոգիստիկ ծառայությունների որակն ու արդյունավետությունը նշանակալիորեն տարբերվում են նաև ըստ առանձին երկրների ու տարածաշրջանների: Այսպես օրինակ՝ Համաշխարհային բանկի ուսումնասիրություններից մեկի համաձայն, բանբակով բեռնված 20 ուսնաշափական երկարությամբ ստանդարտ բեռնարկղը (կոնտեյներ) Դազախսստանից արտահանելու համար պահանջվում է 93 օր, Մալիից՝ 67 օր, մինչդեռ նույն բեռնարկղը Շվեդիայից արտահանվում է ընդամենը 6 օրում<sup>2</sup>: Նմանօրինակ ծայրահեղ անհամաշխափություններ կան նաև արտահանման ծախսերի մասով:

Ակսած 2007 թվականից՝ Համաշխարհային բանկը հաշվարկում է լոգիստիկ գործընթացների արդյունավետությունը՝ կիրառելով լոգիստիկ արդյունավետության համաթիվը: Լոգիստիկ արդյունավետության համաթիվը (Logistics Performance Index – LPI) լոգիստիկայի արդյունավետության բազմագործոն գնահատման հիման վրա համեմատում է աշխարհի 160 երկրներում արտաքին առևտուրի սպասարկման լոգիստիկ հնարավորությունները և դրանք գնահատում 1-ից (վատագույն ցուցանիշ) 5 (լավագույն ցուցանիշ) սանդղակով<sup>3</sup>:

<sup>1</sup>Տե՛ս Kazimirova I., Busa M., Puskas E., Structure of Corporate Logistics Costs // "Transport & Logistics" International Journal ISSN 1451-107X: Volume 15/2015, Issue 34/2015, էջ 6:

<sup>2</sup>Տե՛ս Hausman W.H., Lee H.L., Subramanian U., Global logistics indicators, supply chain metrics, and bilateral trade patterns // World Bank Policy Research Working Paper 3773, November 2005, էջ 2:

<sup>3</sup>Տե՛ս Connecting to Compete 2016: Trade Logistics in the Global Economy: The Logistics Performance Index and Its Indicators / by Arvis J.F., Saslavsky D., Ojala L., Shepherd B.,

Լոգիստիկ գործընթացների արդյունավետությունը կենսական նշանակություն ունի առևտուրի և տնտեսական աճի համար: Միջազգային առևտուրում երկրի մասնակցության հնարավորությունը պայմանավորված է վերջինիս առևտուրականների համար բեռնափոխադրումների և լոգիստիկայի գլոբալ ցանցերի հասանելիությամբ: Գլոբալ լոգիստիկ ցանցին միանալու հնարավորությունները կախված են երկրի ենթակառուցվածքներից, ծառայությունների շուկայից և առևտուրային ընթացակարգերից: Միևնույն ժամանակ, մատակարարումների շղթայի արդյունավետությունը (արժեք, ժամանակ և հուսալիություն) կախված է հայրենական տնտեսության լոգիստիկ համակարգի առանձնահատկություններից: Լոգիստիկայի ընդհանուր արդյունավետության և առևտուրի ընթացակարգերի պարզեցման լավագույն ցուցանիշները սերտորեն կապված են առևտուրի ընդլայնման, արտահանման բազմազանեցման, օտարելքոյա ուղղակի ներդրումների համար գրավչության և տնտեսական աճի հետ:

LPI համարիվը ներառում է վեց բաղադրիչ:

1. Սահմանային, այդ թվում՝ մաքսային վերահսկողության մարմինների կողմից իրականացվող մաքսային ընթացակարգերի արդյունավետություն (ձևականությունների արագություն, պարզություն և կանխատեսլիություն):

Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մասնագետների հաշվարկների՝ ոչ արդյունավետ մաքսային ընթացակարգերի հետևանքով առաջացող լրացուցիչ ծախսները տատանվում են փոխադրվող ապրանքների արժեքի 2-15%-ի սահմաններում<sup>4</sup>: Միաժամանակ, առավել բարենապատ մաքսային ընթացակարգերից ստացվող օգուտները (բարեկեցության բարձրացման տեսանկյունից) մեծ մասամբ համարելի են մաքսատուրքերի կրծատումից ակնկալվող օգուտների հետ<sup>5</sup>:

2. Արևոտային և տրանսպորտային ենթակառուցվածքների որակ (նավահանգիստներ, երկաթգծեր, ավտոմայրուղիներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ):

Տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը հաճախ դիտարկվում է որպես ազգային տնտեսության նրգունակության գրավական: Չարգացած ենթակառուցվածքները նվազեցնում են առանձին երկրների միջև հեռավորության ազդեցությունը, տրանսպորտային և հեռահաղորդակցության ենթակառուցվածքային ցանցերի որակն ու արդիականությունն էապես ազդում են տնտեսական աճի վրա:


3. Մրցունակ սակագներով փոխադրումների կազմակերպման ոյուրինություն:
4. Լոգիստիկ ծառայությունների իրավասություն և որակ (տրանսպորտային օպերատորներ, մաքսային բրոքերներ):
5. Բեռների շարժին հետևելու և վերահսկելու հնարավորություն:
6. Բեռները ստացողին հասնելու ժամանակահատված:

<sup>4</sup> Busch C., Raj A. and Naula T./ The World Bank, Washington, D.C., 2016, էջ 6:

<sup>5</sup> Տես OECD Policy Brief “Costs and Benefits of Trade Facilitation”, Paris, October 2005, էջ 2:

<sup>5</sup> Տես Գ.Ա.Նազարյան, Ա.Ա. Փախսյան, Արտաքին առևտուրի արդյունավետության բարձրացումն ըստ Կիոտոյի միջազգային կոնվենցիայի // «Բանբեր ՀՊՀ», № 1(19), 2010, էջ 80–92:

Գծապատկեր 1-ում ներկայացված են լոգիստիկ արդյունավետության համարվերն ու դրանց բաղադրիչները Գերմանիայում, Հայաստանում և Սիրիայի Արաբական Հանրապետությունում: Ընդ որում, Համաշխարհային բանկի գնահատականներով, Գերմանիան 2016 թվականի LPI համարվով գլխավորում է Երկրների դասակարգման աղյուսակը, իսկ Եզրափակում է այն Սիրիայի Արաբական Հանրապետությունը: Ներկայացված տվյալների համաձայն՝ Գերմանիայում լոգիստիկ արդյունավետության համարվի ներկայիս մակարդակը զավում է մաքսային ընթացակարգերի արդյունավետության և մոցունակ սակագներով փոխադրումների կազմակերպման հետ կապված որոշ խնդիրների առկայության պատճառով: Լոգիստիկ արդյունավետության բարձր մակարդակով Գերմանիային հետևում են լյուքսեմբուրգը, Շվեյցիան, Նիդեռլանդներն ու Սինգապուրը:



Գծապատկեր 1. Լոգիստիկ արդյունավետության համարիվ և դրա բաղադրիչները 2016 թ.<sup>6</sup>

Հայաստանում, որը 2016 թվականի LPI համարվով Երկրների դասակարգման աղյուսակում գրադեցնում է 141-րդ տեղը, լոգիստիկ արդյունավետության համարվի 6 բաղկացուցիչներից առավել խոցելի են մաքսային ընթացակարգերի համեմատաբար ցածր արդյունավետությունը (որի համար LPI համարվի համապատասխան բաղադրիչը կազմել է 1.95) և բեռների շարժին հետևելու ու վերահսկելու սահմանափակ հնարավորությունները (LPI համարվի համապատասխան բաղադրիչը = 2.02):

Հատկանշական է, որ 2016 թվականին Հայաստանը գրանցել է լոգիստիկ արդյունավետության համարվի վատագույն ցուցանիշը, և դա այն դեպքում, երբ LPI համարվով նախորդ՝ 2014 թվականի դասակարգմանը Երկիրն արձանագրել էր մինչ այդ իր լավագույն ցուցանիշը. 2014 թվականին Հայա-

<sup>6</sup> Գծապատկերը կազմվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայի հիման վրա՝ <https://lpi.worldbank.org/international/global/2016>:

տանը LPI համաթվի 2.67 արժեքով գրադեցրել է 92-րդ տեղն աշխարհի 160 երկրների ցանկում: Փաստացիորեն, ընդամենը երկու տարվա ընթացքում մեր երկիրն իր լավագույն ցուցանիշից կտրուկ անցում է կատարել վատագույն ցուցանիշին, ինչի պատճառները, մեր կարծիքով, հավելյալ ուսումնասիրության կարիք ունեն:

Մինչ այդ՝ 2012 թվականին << լոգիստիկ արդյունավետության համարիվ կազմել է 2.56 միավոր՝ երկրին ապահովելով 100-րդ տեղը դասակարգման աղյուսակում, 2010 թվականին արձանագրվել է 2.52 միավոր (111-րդ տեղը), իսկ 2007 թվականին՝ 2.14 միավոր (131-րդ տեղը):

2016 թվականի ցուցանիշներով լոգիստիկ արդյունավետության առավել ցածր մակարդակում հայտնված Սիրիայի Արաբական Հանրապետությունում հատկապես խնդրահարուց են մաքսային ընթացակարգերի արդյունավետությունը, ապրանքային և տրանսպորտային ենթակառուցվածքների որակը, մրցունակ սակագներով փոխադրումների կազմակերպումը, ինչպես նաև լոգիստիկ ծառայությունների իրավասությունն ու որակը:

Լոգիստիկ արդյունավետության հետ կապված խնդիրներն առավել ցայտուն են դրսնորվում հատկապես ծովային ելք չունեցող<sup>7</sup> և փոքր կղզիների վրա տեղակայված զարգացող երկրներում:

Հաշվի առնելով լոգիստիկ գործնարկությունը և դրանց լուծնան բարդությունը՝ վերջին շրջանում աշխարհում առավել մեծ տարածում է գտել լոգիստիկ գործառույթների պատվիրակումը մասնագիտացված առևտուրսինգային ընկերություններին: Լոգիստիկ ծառայությունների առևտուրսինգն արտահանող կամ ներմուծող կազմակերպության կողմից որոշակի գործառույթների հանձնումն է համապատասխան բնագավառում մասնագիտացած մեկ այլ ընկերության սպասարկմանը, այլ կերպ ասած՝ այն լոգիստիկ ծառայությունների (ապրանքների առաքման, պահեստավորման, փաստաթղթերի նախապատրաստման, մաքսային ծևակերպումների իրականացման և այլ գործնարացների) ձեռքբերումն է երրորդ կողմից: Լոգիստիկ առևտուրսինգի նպատակն ընկերության ծախսերի կրծատումն է ապրանքների մատակարարման շրթայի առանձին հատվածներում մասնագիտացված լոգիստիկ օպերատորների ներգրավմամբ: Միջազգային տնտեսական հարաբերություններում լոգիստիկ ծառայությունների առևտուրսինգն արտահայտվում է 3PL (Third Party Logistics՝ երրորդ կողմի լոգիստիկա կամ լոգիստիկ միջնորդ) տերմինով:

Արտադրող կամ առևտուրային ընկերության համար լոգիստիկ միջնորդներ են հանդիսանում փոխադրողները, առաքիչները (տրանսպորտաառաքչական ընկերություններ), բեռնային հանալիրները, ընդհանուր օգտագործման պահեստները և հիմնական լոգիստիկ գործառույթներ կամ համակր լոգիստիկ ծառայություններ իրականացնող այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: Ապահովագրական ընկերությունները, մաքսային միջնորդները, բանկերն ու այլ ֆինանսական հաստատություններ, որոնք իրականացնում են լոգիստիկ գործնարացների վճարահաշվարկային սպասարկում, իիննականում դասվում են օժանդակ լոգիստիկ միջնորդների թվին: Խոշոր միջ-

<sup>7</sup> Տե՛ս Հազարյան Գ., Պախլյան Ա., Приоритеты развития транспортных логистических систем в странах без выхода к морю // “Инновационный потенциал модернизации экономики: инструменты логистики и маркетинга” (т. II): материалы международной научно-практической конференции 10-11 октября 2013 года. IX Южно-Российский логистический форум. Ростов-на-Дону, Издательство РГЭУ (РИНХ), 2013, էջ 130–136:

ազգային տրանսպորտառաքական ընկերությունները և բեռների արագ առաքման սուրհանդակային ծառայությունները (օրինակ՝ TNT, DHL, Shenker / BTL, UPS, Federal Express (FedEx) և այլն) կոչվում են լոգիստիկ օպերատորներ կամ լոգիստիկ ծառայություններ մատուցողներ:

Մի քանի տասնամյակ առաջ «լոգիստիկա» եզրույթը քչերին էր ծանոթ, իսկ այսօր համաշխարհային շուկայում արագորեն ընդլայնվում են երրորդ, չորրորդ և նույնիսկ հինգերորդ սերնդի լոգիստիկ ծառայությունները: Միաժամանակ, միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում լայնորեն կիրառվել և մինչ օրս կիրառվում են առաջին (1PL - First-Party Logistics) և երկրորդ (2PL - Second-Party Logistics) մակարդակի լոգիստիկ ծառայությունները:

1PL-լոգիստիկան կամ առաջին կողմի լոգիստիկան բոլոր լոգիստիկ գործընթացների ինքնուրույն և միակողմանի իրականացումն է ապրանք արտադրողի կամ բեռնատիրոջ կողմից սեփական տրանսպորտային միջոցների և պահեստային տարածքների կիրառմամբ: Դա կարելի է բնորոշել նաև որպես ինքնավար լոգիստիկա կամ լոգիստիկ ինսուրսինգ (Logistic Insourcing):

2PL-լոգիստիկան՝ երկրորդ կողմի լոգիստիկան կամ մասնակի լոգիստիկ առևտրությունները բեռնատիրոջ կողմից կապալառուների ներգրավումն է ավանդական լոգիստիկ գործընթացների իրականացման համար, ինչպես օրինակ՝ փոխադրողների ծառայություններից օգտվելը, պահեստային տարածքների վարձակալումը, մաքսային միջնորդի ծառայությունից օգտվելը և այլն: Այս դեպքում բեռնատերն ինքն է իրականացնում լոգիստիկ գործառույթների մի մասը՝ պլանավորում, լոգիստիկ շղթայի կազմում, սակայն սեփական տրանսպորտային միջոցների կամ պահեստային տարածքների բացակայության պատճառով օգտվում է այլ ընկերությունների ծառայություններից:

3PL-լոգիստիկայի կամ համալիր լոգիստիկ առևտրությունների դեպքում գործ ունենք լոգիստիկ ծառայությունների ամբողջական համալիր իրականացնող ընկերությունների հետ, որոնք կարող են ունենալ սեփական ավտոպարկեր, տերմինալեներ և պահեստային համալիրներ կամ դրանք վարձակալել ենթակապալառուներից՝ ձգտելով առավելացնելու պահպանել մատուցվող ծառայությունների արդյունավետությունն ու մատչելիությունը: Երրորդ սերնդի լոգիստիկան ներառում է նաև ապրանքների բեռնման, բեռնաթափման և բեռների մշակման աշխատանքները: Այս ենթադրում է լոգիստիկ առևտրությունների այնպիսի մակարդակ, որի դեպքում բեռնատերն այլևս ինքնուրույն չի գրադաւում արտաքին լոգիստիկ խնդիրներով՝ դրանք պատվիրակելով մասնագիտացված լոգիստիկ ընկերություններին: 3PL-լոգիստիկ ծառայությունները սկսեցին իրականացվել «Խառը փոխադրումների մասին ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիայի» (1980 թ.) ընդունումից հետո:

4PL-լոգիստիկան՝ չորրորդ մակարդակի լոգիստիկան կամ հնտեգրված լոգիստիկ առևտրություններ ենթադրում է առևտրությունների այնպիսի մակարդակ, որի դեպքում արտադրողն առևտրությունների ծառայություն մատուցող (առևտրութեր) ընկերությանը ներգրավում է ոչ միայն համալիր տրանսպորտային լոգիստիկայի գործառույթների իրականացման գործում, այլև նրան է փոխանցում մատակարարումների շղթայի նախագծման և պլանավորման խնդիրները, ինչպես նաև ընկերությունում լոգիստիկ բնույթի գործարար գործընթացների կառավարումը: Առևտրությունների մասին դեպքում ձեռնարկության գործունեության ողջ լոգիստիկ շղթայի կազմակերպիչն

Է՝ համադրելով խորհրդատվական ընկերության, լոգիստիկ բնույթի գործառար գործընթացների կառավարչի և երրորդ մակարդակի լոգիստիկ ծառայություններ (3PL) մատուցող ընկերության գործառույթները:

Հինգերորդ մակարդակի<sup>5</sup> 5PL լոգիստիկ առևտորսինգային ծառայություն («Վիրտուալ» լոգիստիկա) մատուցող ընկերությունն ապահովում է ծառայությունների ողջ համակերպ՝ ի հաշիվ համընդգրկուն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման: Նմանատիպ «Վիրտուալ» լոգիստիկ ընկերությունը տիրապետում է լոգիստիկ ծառայությունների համաշխարհային շուկայի մասնակիցների և նրանց հնարավորությունների վերաբերյալ ողջ տեղեկատվությանը, օժտված է բարձր տեխնոլոգիական ծրագրային ապահովմանք, ինչը թույլ է տալիս մշակել ամենաարդյունավետ լոգիստիկ շթամները: Ընդ որում, նման առևտորսինգային ընկերությունը կարող է և չունենալ փոխադրումների կազմակերպման գործընթացում անմիջականորեն կիրառվող սեփական նյութական, ֆինանսական, աշխատանքային և այլ ռեսուրսներ:

Այսպիսով՝ կարող ենք առանձնացնել լոգիստիկ ծառայությունների առևտորսինգի կիրառման մի շարք առավելություններ, մասնավորապես.

- Լոգիստիկ առևտորսինգի կիրառման դեպքում անհրաժեշտություն չկա հսկայական ֆինանսական միջոցներ ծախսել սեփական տրանսպորտային և պահեստային ենթակառուցվածքների ձևավորման և գարգացման համար:
- Կարիք չկա լոգիստիկ գործընթացի առանձին փուլերի կազմակերպումը պատվիրել տարրեր կապալառուների: Միակ կապալառուի աշխատանքն առավել հեշտ է վերահսկելը:
- Երաշխավորվում է աշխատանքների իրականացման որակը, ինչը գործեք անհնար է տարրեր ընկերությունների կողմից առանձին ծառայությունների մատուցման դեպքում:
- Կրճատվում է լոգիստիկ գործընթացների իրականացման ժամանակը:
- Առևտորսինգային ընկերությունը, ի տարրերություն պատվիրատուի ներքին լոգիստիկ ծառայության, առավել մոտիվացված է աշխատանքի արդյունավետության բարձրացման գործում, քանի որ տրամադրում է իրավական երաշխիք և ֆինանսական պատասխանատվություն է կրում իրականացվող աշխատանքի որակի և օպերատիվության համար:
- Ի վերջո, լոգիստիկ գործընթացների իրականացումն առևտորսինգային ընկերությանը պատվիրակելու արդյունքում մարդկային, ժամանակային և ֆինանսական ազատված ռեսուրսները կարող են ուղղվել պատվիրատուի գործունեության հիմնական ուղղությունների գարգացմանը:

Ուսումնասիրությունների համաձայն՝ 2015 թվականին լոգիստիկ ծառայությունների առևտորսինգի համաշխարհային ծավալները գնահատվել են շուրջ 751.3 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատությամբ կրճատվելով մոտ 4%-ով<sup>8</sup>, և սա այն դեպքում, եթե նախորդող տարիներին լոգիստիկ առևտորսինգի համաշխարհային ծավալներն անընդհատ աճի միտում են դրսևորել, ինչը հիմնականում պայմանավորված է եղել տնտեսական ակ-

<sup>8</sup> See 2017 Third-Party Logistics Study: The State of Logistics Outsourcing: Results and Findings of the 21<sup>th</sup> Annual Study /by J. Langley and Capgemini Consulting/, USA, 2016, էջ 10:

տիվության աճի և լոգիստիկ ծառայությունների առևտուրսինգի ընդլայնման տեմպերով:

Լոգիստիկ միջնորդների (3PL) 2013–2015 թթ. համաշխարհային եկամուտները ներկայացված են աղյուսակ 1-ում: 2013 թվականի տվյալների համաձայն՝ լոգիստիկ առևտուրսինգի համաշխարհային եկամուտները կազմել են 705 մլրդ ԱՄՆ դոլար: 2014 թվականին այդ ցուցանիշը գերազանցել է 750 մլրդ ԱՄՆ դոլար՝ ապահովելով տարեկան 6.5% աճ: Սակայն 2015 թվականին լոգիստիկ առևտուրսինգի համաշխարհային շուկայում գոյացել է ընդամենը 721 մլրդ ԱՄՆ դոլարի եկամուտ: Նման ամկումը պայմանավորված էր լոգիստիկ առևտուրսինգի համաշխարհային շուկայում եվրոպական և հարավամերիկյան ընկերությունների դիրքերի թուլացմանը:

**Աղյուսակ 1**

**Լոգիստիկ միջնորդների (3PL)<sup>9</sup> համաշխարհային եկամուտներն  
ըստ տարածաշրջանների**

<b>Տարածաշրջան</b>	<b>Լոգիստիկ միջնորդների (3PL) համաշխարհային եկամուտները (մլրդ ԱՄՆ դոլար)</b>			<b>Հավելած 2015 թ. 2014 թ. համեմատությամբ</b>	<b>Բաղադրյալ աճի միջին տարեկան տեսակը 2006- 2015 թթ. (%)</b>
	<b>2013<sup>10</sup></b>	<b>2014</b>	<b>2015</b>		
Հյուսիսային Ամերիկա	177.3	188.2	190.1	+1.0%	+4.0%
Եվրոպա	158.1	174.4	154.5	-11.4%	-0.7%
Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան	255.6	269.6	276.9	+2.7%	+9.3%
Հարավային Ամերիկա	44.9	41.9	35.3	-15.8%	+5.2%
Այլ տարածաշրջաններ	69.0	77.2	64.2	-16.8%	+10.2%
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>704.9</b>	<b>751.3</b>	<b>721.0</b>	<b>-4.0%</b>	<b>+4.8%</b>

Համաշխարհային լոգիստիկ եկամուտներում ամենաբարձր մասնաբաժնը 2013–2015 թթ. (255.6 մլրդ ԱՄՆ դոլար կամ համաշխարհային եկամուտների 36.3%-ը՝ 2013 թվականին, 269.6 մլրդ ԱՄՆ դոլար կամ համաշխարհային եկամուտների 35.9%-ը՝ 2014 թվականին, 276.9 մլրդ ԱՄՆ դոլար կամ համաշխարհային եկամուտների 38.4%-ը՝ 2015 թվականին) բաժին է ընկնում Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններ, որի կազմում ԵԱՏՏ անդամ Երկրներից ընդգրկվում է միայն Ռուսաստանը: Դիտարկվող տարածաշրջաններից Եվրոպայում (-11.4%) և Հարավային Ամերիկայում (-15.8%) 2015 թվականին դիտվել է լոգիստիկ միջնորդների եկամուտների անկում, սակայն, ի տարբերություն Եվրոպայի, Հարավային Ամերիկայում 2006–2015 թթ. լոգիստիկ եկամուտների՝ բարդ տոկոսներով հաշվարկված միջին տարեկան աճի տեսակը (բաղադրյալ աճի միջին տարեկան տեսակը) դրական է՝ +5.2%, ինչը վկայում է տարածաշրջանում լոգիստիկ առևտուրսինգի ծավալների ընդլայնման հնարավորությունների մասին: Միևնույն ժամանակ, 2015 թվականին լոգիստիկ եկամուտների կտրուկ՝ -16.8%-ի հասնող անկում է նկատվել նաև այլ տարածաշրջաններում, այդ թվում՝ Աֆրիկայում և Օվկիանիայում, սակայն բաղադրյալ աճի միջին տարեկան տեսակն այդ տարածաշրջանում 2006–2015 թթ. ամենաբարձրն է՝ +10.2%, ինչը նշանակում է, որ

<sup>9</sup> Տե՛ս 2017 Third-Party Logistics Study: The State of Logistics Outsourcing: Results and Findings of the 21<sup>th</sup> Annual Study /by J. Langley and Capgemini Consulting/, USA, 2016, էջ 10:

<sup>10</sup> Տե՛ս 2016 Third-Party Logistics Study: The State of Logistics Outsourcing: Results and Findings of the 20<sup>th</sup> Annual Study /by J. Langley and Capgemini Consulting/, USA, 2015, էջ 12:

այստեղ առկա է լոգիստիկ ծառայությունների առևտորսինգի ընդլայնման առավել մեծ ներուժ:

Բաղադրյալ աճի միջին տարեկան տեսակ (CAGR - Compound Annual Growth Rate) ցույց է տալիս լոգիստիկ ծառայությունների եկամտաբերության տոկոսը որոշակի ժամանակահատվածի համար: Այս ցուցանիշը հաշվարկում է եկամուտների աճը՝ իմնվելով այն ենթադրության վրա, որ աճի տեսակը մշտական է, իսկ տոկոսները հաշվարկվում են ըստ տարվա:

Լոգիստիկ առևտորսինգի օգտվողների և նման ծառայություններ առաջարկողների շրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմված առևտորսինգի ենթակա լոգիստիկ ծառայությունների ցանկը և դրանց կիրառելիության աստիճանը ներկայացված են աղյուսակ 2-ում, համաձայն որի՝ լոգիստիկայի բնագավառում ներքին փոխադրումների, բեռների պահեստավորման, միջազգային փոխադրումների, բեռների տրանսպորտա-առաքչական փոխադրումների և մաքսային ծևակերպումների ու այլ ընթացակարգերի կազմակերպման հետ կապված ծառայություններն առավել հաճախ են պատվիրակվում առևտորսինգային ընկերություններին:

## Աղյուսակ 2

### Առևտորսինգի ենթակա լոգիստիկ ծառայություններ<sup>11</sup>

№	Ծառայությունների բնույթը	3PL առևտորսինգի կիրառման մակարդակը
1	Ներքին փոխադրումներ	86 %
2	Պահեստավորում	66 %
3	Միջազգային փոխադրումներ	60 %
4	Բեռների տրանսպորտառաքական փոխադրումներ	44 %
5	Մաքսային միջնորդի ծառայություններ	42 %
6	Փոխադրումների պլանավորում և կառավարում	36 %
7	Խաչաձև բեռնում-բեռնաբափում (Cross-docking)	34 %
8	Ֆրախտային հաշիվների առողիտ և վճարում	32 %
9	Պաշարների կառավարում	24 %
10	Պատվերների կառավարում և իրականացում	24 %
11	Հակադարձ լոգիստիկա (խոտան, վերանորոգում, վերադարձ)	23 %
12	Ապրանքների մակնշում, փաթեթավորում, խմբավորում և համալրում	22 %
13	Լոգիստիկ առևտորսինգային ընկերությունների (3PL) կողմից խորհրդատվության տրանսպորտման մատակարարման շղթայի վերաբերյալ	19 %
14	Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ծառայություններ	17 %
15	Նավալորոշի կառավարում	15 %
16	Պահեստամասերի լոգիստիկա	12 %
17	Ինտեգրված լոգիստիկ առևտորսինգի (4PL) ծառայություններ	10 %
18	Հաճախորդների սպասարկում	9 %

Միևնույն ժամանակ, մասնագիտացված լոգիստիկ միջնորդների զարգացմանը և լոգիստիկ ծառայությունների ընդլայնմանը զուգընթաց առաջ են եկել այնպիսի մասնագիտացված ծառայություններ, որոնք հնարավոր չեն կամ տնտեսապես նպատակահարմար չեն իրականացնել ապրանքատիրոջ կամ բերնատիրոջ սեփական ուժերով. նման ծառայությունները վերածվում են մասնագիտացված առևտորսինգային ընկերությունների հիմնական գործառույթների: Այդպիսիք են, օրինակ՝ խաչաձև բեռնում-բեռնաբափումը, լոգիս-

<sup>11</sup> See 2017 Third-Party Logistics Study: The State of Logistics Outsourcing: Results and Findings of the 21<sup>st</sup> Annual Study /by J. Langley and Capgemini Consulting/, USA, 2016, էջ 12:

տիկ առևսորսերի կողմից խորհրդատվության տրամադրումը, պահեստամասերի լոգիստիկան և այլն:

Խաչաձև բեռնում-բեռնաբափումը կամ միջանցիկ պահեստավորումը (Cross-docking) ենթադրում է անմիջականորեն պահեստում բեռների ընդունում և ուղարկում՝ առանց դրանք երկարաժամկետ պահպանման տարածքներում տեղակայելու: Նման ծառայությունների անհրաժեշտություն առաջանում է խառը տիպի փոխադրումների ժամանակ, երբ տրանսպորտային միջոցը բեռնված է լինում տարբեր նախակարարների կողմից ուղարկված և/կամ տարբեր հասցեատերերի համար նախատեսված բեռներով: Այսպես՝ բեռներն ընդունվում են, բեռնաբափում պահեստում, խմբավորվում, բեռնվում այլ փոխադրամիջոցներում և անմիջապես ուղարկվում ըստ նշանակման վայրերի՝ առանց պահեստում պահպանման անհրաժեշտության: Ծառայության հիմնական առավելությունը փոխադրման ժամանակի ու ծախսերի կրճատումն է:

Խաչաձև բեռնման-բեռնաբափման առևսորսինգային ծառայությունների նկատմամբ պահանջարկն ավելանում է միջազգային օնլայն գնումների ծավալների աճին զուգընթաց: 2015 թ. էլեկտրոնային առևտորի մասնաբաժինը համաշխարհային մանրածախ առևտորում կազմել է 7.4%՝ ապահովելով 1.55 տրլն ԱՄՆ դոլարի վաճառք: 2016 թ., նախորդ տարվա համեմատությամբ, էլեկտրոնային առևտորն աճել է՝ ապահովելով համաշխարհային մանրածախ առևտորի 8.7%-ը, և այդ աճը շարունակական միտում ունի: Կանխատեսումների համաձայն՝ արդեն 2021 թ. էլեկտրոնային առևտորն բաժին կընկնի համաշխարհային մանրածախ առևտորի 15.5%-ը՝<sup>12</sup> խթանելով առևսորսինգային լոգիստիկ ծառայությունների պահանջարկը համաշխարհային շուկայում:

Ժամանակակից պայմաններում լայն տարածում է գոտել առևսորսինգի հիմքով պահեստամասերի լոգիստիկ սպասարկման ծառայությունների պատվիրակումը մասնագիտացված լոգիստիկ ընկերություններին: Պահեստամասերի լոգիստիկան (Service parts logistics) լուծում է պատրաստի ապրանքների, սարքավորումների կամ տեխնիկայի (ավտոմեքենաներ կամ այլ տրանսպորտային տեխնիկա, արդյունաբերական սարքավորումներ, կենցաղային տեխնիկա, համակարգչային տեխնիկա, գրասենյակային սարքավորումներ և այլն) առանձին մասերի ու բաղադրիչների պահեստավորման, փոխադրման, վերանորոգման և ֆիզիկական վերափոխման խնդիրները, որոնք էապես տարբերվում են հումքի և պատրաստի արտադրանքի լոգիստիկայից: Պահեստամասերի լոգիստիկայի հիմնական առանձնահատկությունն այն է, որ վերջինս ենթադրում է ապրանքի վաճառքից հետո պահանջվող լոգիստիկ սպասարկում, մինչդեռ հումքի և պատրաստի արտադրանքի դեպքում լոգիստիկ ծառայությունները նախորդում են դրանց վաճառքին: Եթե ավանդական մատակարարման շղթաների լոգիստիկ սպասարկման պարագայում գործում է «Ճիշտ ժամանակին» (just-in-time) սկզբունքը, որով նվազագույնի են հասցվում պահպանման և փոխադրման ժախսերը, ապա պահեստամասերի մատակարարման և տեղադրման դեպքում կիրառվում է «ըստ պահանջի» (just-in-case) մոտեցումը, որի ապահովման համար ընկե-

<sup>12</sup> Տես Worldwide e-commerce share of retail sales 2015-2021, The Statistics Portal “Statista” - <https://www.statista.com/statistics/534123/e-commerce-share-of-retail-sales-worldwide/> (Date of access – 10.11.2017):

բությունները ստիպված են լինում պահպանել որոշակի պահեստամասեր՝ տեխնիկայի և սարքավորումների հնարավոր անսարքությունից ապահովագրվելու համար: Բնականաբար, անորոշ ժամանակով պահեստամասերի պահպանումն ու սպասարկումը լրացուցիչ ծախսեր են առաջացնում արտադրող ընկերությունների համար, որոնք չեն կարող ներառվել արդեն վաճառված և շահագործնան հանձնված սարքավորումների գներում: Ննան պայմաններում պահեստամասերի լոգիստիկ սպասարկման գործառույթների փոխանցումը մասնագիտացված առևտորսինգային ընկերություններին արտադրողներին թույլ է տալիս իրենց ջանքերն ու միջոցները կենտրոնացնել բուն գործունեության վրա՝ բարձրացնելով արտադրության արդյունավետությունը:

### Աղյուսակ 3

#### Աշխարհի առաջատար լոգիստիկ ընկերությունները<sup>13</sup>

Դիրքը 2015 թ.	Ընկերությունը	Երկիրը	Եկամուտները (մլն ԱՄՆ դոլար)		Հավելածը (%)
			2014 թ.	2015 թ.	
1	DHL	Գերմանիա	37.496	32.740	-12,7
2	KUEHNR + NAGEL	Շվեյցարիա	23.279	21.084	-9,4
3	DB SCHENKER LOGISTICS	Գերմանիա	18.987	16.444	-13,4
4	C.H. ROBINSON WORLDWIDE	ԱՄՆ	11.937	11.990	0,4
5	DSV	Դանիա	8.651	7.567	-12,5
6	CEVA LOGISTICS	Նիդեռլանդներ	7.863	6.959	-11,5
7	EXPEDITORS INTERNATIONAL	ԱՄՆ	6.565	6.617	0,8
8	DACHER	Գերմանիա	7.033	6.116	-13,0
9	PANALPINA	Ֆրանսիա	7.333	6.087	-17,0
10	XPO LOGISTICS	ԱՄՆ	2.357	6.063	157,2
11	UPS SUPPLY CHAIN SOLUTIONS	ԱՄՆ	5.758	5.900	2,5
12	J.B. HUNT	ԱՄՆ	5.799	5.815	0,3
13	SINOTRANS	Չինաստան	5.728	5.566	-2,8
14	SNCF GEODIS	Ֆրանսիա	5.847	5.194	-11,2
15	GEFCO	Ֆրանսիա	5.334	4.512	-15,4
<b>Աշխարհի 15 առաջատար լոգիստիկ ընկերությունները միասին</b>			<b>159.967</b>	<b>148.654</b>	<b>-7,1</b>
<b>Աշխարհի 15 առաջատար լոգիստիկ ընկերությունների մասնաբաժնը 50 առաջատար ընկերությունների եկամուտներում</b>			<b>65,5 %</b>	<b>64,6 %</b>	<b>-0,9</b>
<b>Աշխարհի 50 առաջատար լոգիստիկ ընկերությունները միասին</b>			<b>244.170</b>	<b>229.981</b>	<b>-5,8</b>

Աշխարհի 50 առաջատար լոգիստիկ առևտորսինգային ընկերությունների 2015 թվականի եկամուտները կազմել են շուրջ 230 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 5,8%-ով զիջում է նախորդ տարվա ցուցանիշը՝ 244,2 մլրդ ԱՄՆ դոլար (աղյուսակ 3): Համաշխարհային առևտորսինգային ծառայությունների աճող շուկայում եկամուտների ննան անկումը պայմանավորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ ազգային արժույթների արժեզրկման և վարելիքի համաշխարհային գների անբարենպաստ տատանման միտումներով:

Առաջատարների շարքում են եվրոպական և ամերիկյան լոգիստիկ

<sup>13</sup> Տես Top 50 Global 3PL Companies, Journal of Commerce // [https://www.joc.com/sites/default/files/u48801/spec-GLC-table\\_0.jpg](https://www.joc.com/sites/default/files/u48801/spec-GLC-table_0.jpg)

առևտորսինգային ընկերությունները, որոնց գլխավորում է 2015 թ. շուրջ 32,7 մլրդ ԱՄՆ դոլարի եկամուտ ապահոված գերմանական DHL ընկերությունը: Վերջինս աճող էլեկտրոնային մանրածախ առևտուրը սպասարկող հիմնական մատակարարներից մեկն է: Աշխարհի 50 խոշոր լոգիստիկ ընկերություններից 19-ը պատկանում են ԱՄՆ-ին, 7-ը՝ Գերմանիային, 6-ը՝ Ճապոնիային, 4-ը՝ Ֆրանսիային, 3-ը՝ Հարավային Կորեային, 2-ը՝ Շանհային, իսկ մնացածը՝ Նիդեռլանդներին, Լուքսեմբուրգին, Շվեյցարիային, Չինաստանին, Հոնկոնգին, Ավստրալիային, Միացյալ Թագավորությանը և Քուվեյթին:

Այսպիսով՝ լոգիստիկայի բնագավառում առևտորսինգային ընկերությունների ներգրավումը թույլ կտա կիրառել բեռների սպասարկման և մատակարարնան առավել արդիական ու արդյունավետ սխեմաներ՝ կրծատելով ժամանակի և ֆինանսական միջոցների ծախսումները: Թերևս այդ է պատճառը, որ ներկայումս մատակարարությունների կայուն ծավալ ունեցող խոշոր ընկերությունները, մասնավորապես՝ վերազգային կորպորացիաները գերադասում են լոգիստիկ գործառույթները պատվիրակել մասնագիտացված առևտորսինգային ընկերություններին:

### Օգտագործված գրականություն

1. Նազարյան Գ.Ա., Փախստան Ա.Ա., Արտաքին առևտուրի արդյունավետության բարձրացումն ըստ Կիոտոյի միջազգային կոնվենցիայի // «Բանբեր ՀՊՏՀ», № 1(19), 2010:
2. Владимиров С.А., Мировая транспортная система и логистика: основные направления развития // Региональная экономика и управление: электронный научный журнал. ISSN 1999-2645. №2 (46). Номер статьи: 4602. Дата публикации: 2016-04-23. Режим доступа: <http://eee-region.ru/article/4602/>
3. Назарян Г., Пахлян А., Приоритеты развития транспортных логистических систем в странах без выхода к морю, // Инновационный потенциал модернизации экономики: инструменты логистики и маркетинга (т. II): материалы международной научно-практической конференции 10-11 октября 2013 года. IX Южно-Российский логистический форум, Ростов-на-Дону, Издательство РГЭУ (РИНХ), 2013.
4. Назарян Г., Пахлян А., Проблемы реализации логистического потенциала Армении и России // Управление логистическими системами: глобальное мышление – эффективные решения (том I): Материалы международного научно-практического юбилейного X Южно-Российского логистического форума, 10-11 октября 2014 г. Ростов н/Д: Издательско-полиграфический комплекс РГЭУ (РИНХ), 2014.
5. Назарян Г., Сравнение логистических систем в странах-членов ЕВРАЗЭС // Управление логистическими системами: глобальное мышление – эффективные решения (том I): Материалы международного научно-практического юбилейного X Южно-Российского логистического форума, 10-11 октября 2014 г., Ростов н/Д: Издательско-полиграфический комплекс РГЭУ (РИНХ), 2014.
6. 2016 Third-Party Logistics Study: The State of Logistics Outsourcing: Results and Findings of the 20th Annual Study /by J. Langley and Capgemini Consulting/, USA, 2015.
7. 2017 Third-Party Logistics Study: The State of Logistics Outsourcing: Results and Findings of the 21st Annual Study /by J. Langley and Capgemini Consulting/, USA, 2016.

8. Connecting to Compete 2016: Trade Logistics in the Global Economy: The Logistics Performance Index and Its Indicators / by Arvis J.F., Saslavsky D., Ojala L., Shepherd B., Busch C., Raj A. and Naula T./ The World Bank, Washington, D.C., 2016.
9. Hausman W.H., Lee H.L., Subramanian U., Global logistics indicators, supply chain metrics, and bilateral trade patterns // World Bank Policy Research Working Paper 3773, November 2005.
10. Kazimirova I., Busa M., Puskas E., Structure of Corporate Logistics Costs // Transport & Logistics: International Journal ISSN 1451-107X: Volume 15/2015. Issue 34/2015.
11. OECD Policy Brief “Costs and Benefits of Trade Facilitation”, Paris, October 2005.

**ГРИГОР НАЗАРЯН**

*Декан факультета регулирования экономики и международных экономических отношений АГЭУ, кандидат экономических наук, доцент*

**АННА ПАХЛЯН**

*Главный специалист отдела обеспечения качества, ассистент кафедры МЭО АГЭУ, кандидат экономических наук*

***Аутсорсинг логистических услуг: международные тенденции.***

**—** Ожесточение глобальной конкуренции, geopolитические вызовы, неравномерное распределение транспортных и логистических инфраструктур создают серьезные проблемы для мировой экономики, указывая на необходимость эффективных транспортных и логистических систем. Эффективность логистических процессов способствует расширению торговли, диверсификации экспорта и, как следствие, экономическому росту.

Нынешние глобальные развития привели к увеличению использования аутсорсинга в логистических процессах. При этом, параллельно с развитием услуг аутсорсинга, наблюдается расширение функций, передающихся третьей стороне, начиная с реализации комплексной транспортной логистики, проектирования и планирования цепочки поставок до комплексного управления логистическими бизнес-процессами в компании клиента. В то же время с расширением рынков и объемов сбыта, некоторые специализированные услуги уже экономически нецелесообразно осуществлять собственными усилиями продавца или погрузчика, поэтому эти услуги превращаются в основные функции специализированных аутсорсинговых компаний.

**Ключевые слова:** логистические услуги, индекс эффективности логистики, аутсорсинг, логистический посредник, логистика третьей стороны, мировые доходы, логистические инфраструктуры.

JEL: F4, F60

**GRIGOR NAZARYAN**

*Dean of the Faculty of "Regulation of Economy and International Economic Relations", Associate Professor at the Chair of "International Economic Relations" ASUE, PhD in Economics*

**ANNA PAKHLYAN**

*Chief Specialist at Quality Assurance Division, Assistant Professor at the Chair of "International Economic Relations" ASUE, PhD in Economics*

***Logistic Services Outsourcing: International Trends.***

Fierce global competition, geopolitical challenges, uneven distribution of transport and logistics infrastructures create

serious problems for the world economy, pointing to the need for efficient transport and logistics systems. The effectiveness of logistics processes contributes to the trade expansion, exports diversification and, as a result, to the economic growth.

The current global developments have led to an increased use of outsourcing in logistics processes. At the same time, in parallel with the development of outsourcing services, there is an expansion of the functions transferred to a third party, starting with the implementation of complex transport logistics, design and planning of the supply chain to the integrated management of logistics business processes in the client company. At the same time, with the expansion of markets and sales volumes, it is already economically impractical to carry out certain specialized services with the seller's own efforts, so these services become the main functions of specialized outsourcing companies.

**Key words:** *logistics services, logistics performance index, outsourcing, logistics intermediary, third party logistics, world income, logistics infrastructure.*

JEL: F4, F60